

Տասնորդական կոտորակների դիրքային գրառումը և նրանց ընթերցումը

Ինչպես ամբողջ թվերի համար, տասնորդական կոտորակների համար ևս կարելի է օգտագործել դիրքային գրառում: Նախ դիտարկենք այնպիսի տասնորդական կոտորակներ, որոնց համարիչում թվանշանների քանակն ավելին է, քան հայտարարում, կամ հավասար է նրան: **Համարիչում ստորակետով աջից անջատենք այնքան թվանշան, քանի գրո որ կա հայտարարում: Ստացված գրառումը կլինի այդ տասնորդական կոտորակի դիրքային գրառումը:**

Օրինակ՝

$$\frac{843}{10} = 84,3, \quad \frac{2037}{100} = 20,37, \quad -\frac{4452}{1000} = -4,452:$$

Այն դեպքում, երբ համարիչի թվանշանների քանակն ավելի փոքր է, քան հայտարարինը, պետք է, համարիչին ձախից գրոներ կցագրելով, հավասարեցնել այդ քանակները, իսկ հետո վարվել այնպես, ինչպես նախորդ օրինակներում: Տեսե՛ք, թե ինչպես է այդ արվում.

$$\frac{96}{100} = \frac{096}{100} = 0,96, \quad \frac{321}{10000} = \frac{00321}{10000} = 0,0321:$$

Եթե տասնորդական կոտորակի դիրքային գրառման մեջ ստորակետից հետո միայն 0-ներ են, ապա տասնորդական կոտորակը ամբողջ թիվ է: Տասնորդական կոտորակների դիրքային գրառման մեջ ստորակետից առաջ գրված թիվը կոչվում է տասնորդական կոտորակի ամբողջ մաս, իսկ ստորակետից հետո գրված թիվը՝ նրա կոտորակային մաս:

Դրական տասնորդական կոտորակի դիրքային գրառման մեջ թվանշանի զբաղեցրած տեղը կոչվում է կարգ: Յուրաքանչյուր կարգում գրված թվանշանը ցույց է տալիս, թե տվյալ կարգի քանի միավոր է պարունակում տասնորդական կոտորակը:

Ստորակետից անմիջապես հետո եղած կարգը կոչվում է տասնորդականների կարգ, նրան հաջորդում են հարյուրերորդականների, հազարերորդականների, տասնհազարերորդականների կարգերը, և այդպես շարունակ:

Դրական տասնորդական կոտորակների ընթերցման ժամանակ նախ ասվում է ստորակետից առաջ գրված թիվը, որին ավելացվում է «ամբողջ» բառը: Ապա ասվում է **ստորակետից հետո գրված թիվը, որին**

ավելացվում է կոտորակի ամենափոքր կարգի անվանմանը համապատասխանող բառ՝ «տասնորդական», «հարյուրերորդական», «հազարերորդական» և այլն:

Օրինակ՝ 375,0891 կոտորակը կարդացվում է՝ երեք հարյուր յոթանասունհինգ ամբողջ ութ հարյուր իննսունմեկ տասնհազարերորդական: Բացասական տասնորդական կոտորակներն ընթերցվում են նույն կերպ, ինչ որ դրականները՝ այն տարբերությամբ, որ սկզբում ավելացվում է «մինուս» բառը:

Առաջադրանքներ

1) Դիրքային գրառումով գրե՛ք տասնորդական կոտորակը.

Օրինակ՝ $\frac{36}{10} = 3,6$

$$\begin{array}{lll} \text{ա)} \frac{372}{10}, & \text{գ)} \frac{13}{1000}, & \text{ե)} \frac{4567}{10} \\ \text{բ)} \frac{813}{100}, & \text{դ)} \frac{3}{100}, & \text{զ)} \frac{932}{1000}, \end{array}$$

2) Տասնորդական կոտորակը գրե՛ք սովորական կոտորակի տեսքով.

Օրինակ՝ $3,35 = \frac{335}{100}$

$$\begin{array}{lll} \text{ա)} 1,27 & \text{գ)} 187,16 & \text{ե)} 1,008 \\ \text{բ)} 15,39 & \text{դ)} 0,007 & \text{զ)} 35,1 \end{array}$$

3) Անվանե՛ք տասնորդական կոտորակի բոլոր կարգերը.

Օրինակ՝

$$\begin{array}{l} \text{ա)} 415,24 \\ \text{բ)} 1,258 \\ \text{գ)} 0,3941 \\ \text{դ)} 12,158 \end{array}$$

4) Կարդացե՛ք կոտորակը.

$$\begin{array}{ll} \text{ա)} 0,215 & \text{գ)} 614,1307 \\ \text{բ)} 123,08 & \text{դ)} 15,1 \end{array}$$

5) Գրելով տասնորդական կոտորակը դիրքային գրառումով՝ գտե՛ք նրա ամբողջ մասը.

Օրինակ՝ $\frac{25}{10} = 2,5$ ՝ տասնորդական կոտորակի ամբողջ մասը 2 է:

ա) $\frac{91}{10}$, բ) $\frac{2}{100}$, գ) $\frac{3214}{100}$, դ) $\frac{5677}{10}$:

6) Գրելով տասնորդական կոտորակը դիրքային գրառումով՝ գտե՛ք նրա կոտորակային մասը.

Օրինակ՝ $\frac{25}{10} = 2,5$ ՝ տասնորդական կոտորակի կոտորակային մասը 0,5 է:

ա) $\frac{83}{100}$, բ) $\frac{2675}{10}$, գ) $\frac{998}{1000}$, դ) $\frac{65782}{100}$:

7) Թվանշաններով գրե՛ք կոտորակը.

- ա) հինգ ամբողջ երկու հարյուրերորդական,
- բ) ութ ամբողջ քսանհինգ հազարերորդական,
- գ) երեսուներեք ամբողջ տասնյոթ տասհազարերորդական,
- դ) զրո ամբողջ երեք հարյուր երեսունյութ հազարերորդական,
- ե) մինուս հարյուր ութսունյոթ ամբողջ չորս հարյուր իննսուն հազարերորդական:

8) Ի՞նչ թվանշան է գրված 254,50861 կոտորակի՝

- ա) հարյուրյակների կարգում,
- բ) տասնորդականների կարգում,
- գ) տասհազարերորդականների կարգում,
- դ) տասնյակների կարգում: